ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«02» «հուլիսի» 2025 թվական № 259-Լ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 12-Ի N 273-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածը և վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի օգոստոսի 12-ի «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորող հանձնաժողով ստեղծելու, լիցենզավորող հանձնաժողովի անհատական կազմն ու աշխատակարգը հաստատելու մասին» N 273-Լ հրամանի հավելված N 1-ում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) «Գ. Միքայելյան շրջակա միջավայրի նախարարության թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման վարչության պետի պարտականությունները կատարող» բառերը փոխարինել «Գ. Միքայելյան շրջակա միջավայրի նախարարության թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման վարչության պետ» բառերով,

2) «Գ. Կարապետյան շրջակա միջավայրի նախարարության թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման վարչության ավագ մասնագետ (հանձնաժողովի քարտուղար)» բառերը փոխարինել «Ռ. Նաջարյան շրջակա միջավայրի նախարարության թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման վարչության գլխավոր մասնագետ (հանձնաժողովի քարտուղար)» բառերով:

Հ. ՍԻՄԻԴՅԱՆ

7/2/2025

X

ՀԱԿՈԲ ՍԻՄԻԴՅԱՆ

Երևան

Signed by: SIMIDYAN HAKOB 3004840588